



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

N \_\_\_\_\_

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ոստիկանության համակարգի հարգելի՛ աշխատակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Այն ծառայությունը, որ դուք եք իրականացնում, ուղղակիորեն ազդում է նաև ձեր ընտանիքների, ձեր երեխաների կենցաղի վրա:

Եթե բժիշկները որպես առաջնագիծ՝ իրենց ծառայությունն այսօր իրականացնում են բուժկենտրոններում, մեկուսացման վայրերում, հիվանդասենյակներում, ապա հասարակական կարգի պահպանման ու նաև Պարետատան ցուցումների իրականացման վերահսկողության, տեղաշարժման սահմանափակման նկատմամբ իրականացված և իրականացվող այս լուրջ գործընթացները խոշոր հաշվով ուղղակիորեն դրված են ձեզ վրա, ինչն, անշուշտ, պատվով եք իրականացնում:

Իմացե՛ք, որ լիարժեք գիտակցում ենք այն խնդիրներն ու դժվարությունները, որոնք այսօր կան, բայց ցանկանում եմ ՀՀ վարչապետի, Կառավարության և անձամբ իմ անունից անվերապահ աջակցություն հայտնել ձեզ՝ մեր մարզային ոստիկանության վարչությանը, բոլոր աշխատակիցներին՝ շարքային ծառայողից մինչև Ոստիկանության ամենաբարձր դասային աստիճան ունեցող սպաների, քանզի մեր անելիքը, մասնավորապես, Կոտայքի մարզում մեկն է՝ Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացու շահը գերադասել, դոմինանտ հոչակել և իրացնել ամբողջ ծավալով՝ չստորադասելով որևէ այլ գործոնների:

Հետայսու ևս մեր կամքն անապառ է՝ գործելու բացառապես հանուն Հայաստանի Հանրապետության և ՀՀ քաղաքացու:

Հարգանքով՝

Ռ.Պետրոսյան